



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ 2018-22 թթ.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թ.-ին համալսարանը ավարտել է ՀԱԱՀ 2012-2017 թթ. ռազմավարական զարգացման ծրագրի իրականացումը:

Զարգացման երկարաժամկետ ծրագրի շրջանակներում աշխատանքային փորձը՝ հստակ սահմանված ռազմավարական գերակայություններով, բավականին դրական էր և համալսարանին թույլ տվեց հասնել զգալի արդյունքների:

2012 թ.-ին համալսարանում իրականացվել է ենթակառուցվածքային ինքնագնահատում, իսկ 2015 թ.-ի մարտի 21-ի № 5 որոշմամբ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի կողմից ՀԱԱՀ-ն ստացել է ենթակառուցվածքային հավատարմագրում 4 տարի ժամկետով:

Ենթակառուցվածքային արտաքին գնահատման արդյունքում մշակված է եղել համալսարանի բարելավման պլան, որի իրականացման արդյունքները 2016 թ.-ին ՈԱՍԿ-ի համապատասխան հանձնաժողովի կողմից գնահատվել է դրական:

2016 թ.-ի սեպտեմբերի 27-ին ՀԱԱՀ-ն Գերմանիայի Դաշնության՝ Հավատարմագրման, սերտիֆիկացման և որակի ապահովման ինստիտուտի (ACQUIN) կողմից ստացել է հավատարմագրում՝ Միջազգային ազդարային մենեջմենթ մագիստրական ծրագրի իրականացման համար:

Հայաստանի ազգային ազդարային համալսարանը լուրջ և ծանրակշիռ գործունեության արդյունքում 2015թ. արձանագրեց էական հաջողություններ:

Բուհի կատարած հսկայածավալ աշխատանքների մասին է խոսում այն փաստը, որ 2015 թվականին, որպես գիտահետազոտական աշխատանքներ կատարող բուհ, համալսարանը զբաղեցնում է պատվավոր 1-ին, իսկ դասավանդման գործընթաց անվանակարգում՝ 2-րդ տեղը:

Ամենամյա նմանատիպ հետազոտություններ և վարկանիշավորում է անցկացվում նաև ARES միջազգային ընկերության կողմից, որի արդյունքում 2015 թվականին, բուհերի վարկանիշավորման արդյունքում, Հայաստանի ազգային ազդարային համալսարանը արժանացել է բարձր վարկանիշի:

Համաձայն 2015 թվականի ցուցանիշների՝ ՀԱԱՀ-ն հայաստանյան բուհերի շարքում զբաղեցնում է 4-րդ հորիզոնականը, ինչը բարձր գնահատական է, որը հաստատվել է ARES-ի համանուն հավաստագրով:

Հայաստանի ազգային ազդարային համալսարանի ռազմավարական ծրագիրը սահմանում է համալսարանի առաքելությունը, տեսլականը, առաջնությունները, գլխավոր նպատակներն ու դրանց իրականացման հիմնական ուղիները, որոնք առաջնորդելու են համալսարանին 2018-2022 թվականը:

### ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԵՆՔ

ՀԱԱՀ զարգացման ռազմավարական ծրագիրը մշակվել է հետևյալ հիմքերի վրա.

- ❖ ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր
- ❖ ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագիր
- ❖ Նորմատիվային իրավական ակտերի դրույթներ, որոնք ներառում են ՀՀ կրթության և գիտության զարգացման հիմնական ուղղվածությունները:

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### ԳԼՈՒԽ 1. ՀԱԱՀ 2012-17 թթ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

#### 1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆ ՆԵՐԿԱ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Ազգաբնակչության թվաքանակի կայուն աճի միտումները, երկրագնդի վրա հաճախակի դարձած բնական և էկոլոգիական աղետները, երաշտները, ջրհեղեղները, հրդեհները և այլ երևույթներ մարդկության պարենային ապահովվածության խնդիրը դարձնում են գերակա:

Համաշխարհային ընդհանրական խնդիրների շարքում Հայաստանի հանրապետության համար ավելանում են նաև գյուղատնտեսական օգտագործելի՝ մասնավորապես ոռոգելի հողերի սակավությունը, դրանց ոչ արդյունավետ օգտագործումը, հողերի մասնատվածությունը, սպառողական շուկայի մարկետոլոգիական և գյուղատնտեսության վարման ժամանակակից մենեջմենթի բացակայությունը և այլն:

Այսօր աշխարհի առաջավոր երկրներում ագրոպարենային համակարգի զարգացումն իրականացվում է ագրարային ժամանակակից տեխնոլոգիաների և երկրագործության վարման արդյունավետ ու ինտենսիվ համակարգերի ներդրմամբ և գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացումը զուգակցվում է շրջակա միջավայրի և կենսառեսուրսների անվտանգության պահպանման միջոցառումների կիրառմամբ:

Ագրարային քաղաքականության նպատակաուղղված և արդյունավետ իրականացումը, ագրարային ոլորտի զարգացումը, երկրի պարենային անվտանգության և բնակչության անվտանգ սննդամթերքով ապահովումը այսօր ՀՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարության գերխնդիրն է և առանց համապատասխան գիտելիքներով ու փորձով օժտված մասնագետների այս ամենի իրականացումը դառնում է անհրատեսական:

Նշված խնդիրների լուծման, կրթական համակարգի բարեփոխումների իրականացման գործում իր ուրույն դերակատարումն ունի Հայաստանի ազգային ագրարային համալսարանը որպես երկրում ագրոպարենային ոլորտի համար կադրեր պատրաստող միակ բուհ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը իր ներկա կարգավիճակով, իր ուսումնագիտական ներուժով և իր գործունեությամբ հանդիսանում է երկրում ագրոպարենային ոլորտի համար մասնագետներ պատրաստող և մեծ թափ ստացած ու շարունակվող կրթական բարեփոխումներ իրականացնող առաջատար բուհերից մեկը:

Ագրարային համալսարանն իրականացնում է իր դիրքերի ամրապնդմանը, արտաքին գրավչության ապահովմանը, բարձրագույն կրթության ոլորտում մրցունակությունը բարձրացմանը և գերակա բոլոր ուղղություններով բարձր ցուցանիշների ձեռքբերմանը միտված նպատակաուղղված քաղաքականություն:

Ներկայումս կրթական ոլորտի բարեփոխումներն ընդգրկել են կրթության բովանդակային փոփոխությունների ու կրթության ներքին արդյունավետության բարելավման և միջազգային կրթական տարածքին ինտեգրման խնդիրները, ինչպես նաև հնարավորություն են տալիս լուծելու կրթության համակարգում առկա խնդիրները:

Համալսարանի զարգացման 2012-17 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը նախադրյալներ ստեղծեց ենթակառուցվածքային և ծրագրային բարեփոխումների, կրթական ու գիտական գործըն-

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Թացների արդիականացման, արտերկրի առաջատար համալսարանների և կազմակերպությունների հետ սերտ կապերի հաստատման և կայուն հիմքեր ստեղծեց համալսարանի հետագա զարգացման համար:

### Առկա մարտահրավերները

- Դիմորդների ու ուսանողների թվաքանակի նվազում,
- Համալսարանի ֆինանսական միջոցների անբավարարությունը և բյուջեի կախվածությունը ուսանողների վարձավճարներից,
- Համալսարանի և աշխատաշուկայի միջև անբավարար կապի առկայությունը,
- Ագրարային ոլորտի աշխատանքում մասնագետների պահանջարկի նվազում,
- Միջազգային համագործակցության համար ուսանողության և դասախոսական կազմի օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակը,
- Միջազգային համագործակցության զարգացման թույլ տեմպեր:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համար շարունակում է մնալ զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը:

Համալսարանն իր ներկա կարգավիճակով, ուսումնագիտական ու ենթակառուցվածքային ներուժով և իր գործունեությամբ հանդիսանում է երկրում մեծ թափ ստացած կրթական բարեփոխումներ իրականացնող առաջատար բուհերից մեկը և համալսարանում իրականացվող բարեփոխումների ընթացքն այլևս դարձել է անշրջելի:

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

<b>2.1. ՏԵՍԼԱԿԱՆ</b>	<p>Հայաստանի ազգային համալսարանը իր մատուցած ծառայությունների շնորհիվ երկրում և տարածաշրջանում ձգտում է դառնալ ագրարային ոլորտի զարգացմանը նպաստող ակադեմիական համալիր և հանդես է գալու որպես գիտելիք ու առաջավոր տեխնոլոգիաներ տարածող, կրթական, խորհրդատվական ու հետազոտական ինովացիոն գործունեություն իրականացնող, ուսանողակենտրոն կրթական միջավայր ու լայն մատչելիություն ապահովող և ձևավորված որակի մշակույթ ունեցող կենտրոն:</p>
<b>2.2. ՀԱԱՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ</b>	<p>Հայաստանի ազգային ագրարային համալսարանը նպատակ ունի համակենտրոնացնել կրթական ու գիտական, կադրային և նյութական ներուժը, ապահովել որակյալ կրթություն ու հիմնարար գիտական հետազոտություններ, և պատրաստել ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող ու դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող մասնագետներ ու գիտաշխատողներ:</p>
<b>2.3. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ</b>	<p>ՀԱԱՀ հիմնական արժեքներն են որակը, էթիկան և մասնագիտական մոտեցումը:</p> <p><b>Համալսարանի արժեհամակարգի տարրերն են՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>▪ տարածաշրջանում ագրարային ոլորտի մասնագետներ պատրաստող առաջատար համալսարանի կարգավիճակ,</li> <li>▪ գործունեության կողմնորոշում՝ ագրոպարենային ոլորտի առանցքային խնդիրների լուծմանը,</li> <li>▪ համալսարանի փոխգործունեությունը ռազմավարական գործընկերների հետ՝ պահպանելով սեփական ինքնությունը, ինստիտուցիոնալ ինքնավարությունը և ակադեմիական ազատությունը,</li> <li>▪ ակտիվ ուսումնառողներ, որոնք տիրապետում են անհրաժեշտ գիտելիքները, հմտությունները և կարողությունները՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան,</li> <li>▪ զարգացած մարդկային ներուժ, հայրենասիրական դիրքորոշման ձևավորում հայրենիքի նկատմամբ,</li> <li>▪ գիտության և նորարարության առանցքային դերը համալսարանի զարգացման գործընթացում,</li> <li>▪ զարգացած ենթակառուցվածք և նյութատեխնիկական բազա,</li> <li>▪ ֆինանսական կայունություն,</li> <li>▪ համալսարանում որակի կառավարման համակարգի ներդրում և զարգացում,</li> <li>▪ կորպորատիվ մշակույթ, դրական իմիջ և մասնագիտական ճանաչում:</li> </ul>

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### 2.4. ՌԱԶՄՍՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱԱՀ 2018-2022 թթ. զարգացման ծրագիրը նպատակաուղղված է ազգային գիտակրթական համակարգի նպատակների և խնդիրների իրականացմանը և ագրոպարենային ոլորտում բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստմանը, մասնավորապես՝

- կրթության, գիտության և արտադրության ինտեգրման հիման վրա աշխատաշուկայում մրցունակ մասնագետների ձևավորմանը ուղղված կրթական ծրագրերի կատարելագործում,
- ագրոպարենային ոլորտի ազգային գերակայություններին համապատասխան գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում,
- միջազգային կրթական համակարգում համալսարանի դիրքի ամրապնդման նպատակով միջազգային կրթական տարածքին ինտեգրման գործընթացների ինտենսիվայում,
- համալսարանի գիտակրթական ենթակառուցվածքների կատարելագործում:

**ՀԱԱՀ-ի հիմնական ռազմավարական ուղղություններն  
(առաջնահերթություններն ) են՝**

- կրթական միջավայրի և կրթական գործունեության զարգացում,
- գիտահետազոտական և նորարարական գործունեության զարգացում,
- ագրոպարենային ոլորտի խորհրդատվական գործունեության զարգացում և կատարելագործում,
- կադրային ներուժի զարգացում,
- ենթակառուցվածքների և ռեսուրսային կազմի զարգացում,
- միջազգային գործունեություն, արտաքին կապերի ընդլայնման և միջազգային զարգացում,
- համալսարանի ֆինանսական գործունեության զարգացում և ֆինանսական կայունության ապահովում,
- կառավարման համակարգի կատարելագործում և զարգացում:

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

<p><b>ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ</b></p> <p>Համալսարանի ռազմավարական նպատակն է բարձրացնել համալսարանի կրթական, գիտահետազոտական, խորհրդատվական և նորարարական գործունեության արդյունավետությունը և թողարկել աշխատաշուկայում մրցունակ և բարձրորակ շրջանավարտներ:</p>
<p><b>Համալսարանական ռազմավարական խնդիրներն են՝</b></p> <ul style="list-style-type: none"><li>▪ Մասնագետների պատրաստման բարձր մակարդակ ապահովելով և հաշվի առնելով կադրերի նկատմամբ ներկայացվող ժամանակակից պահանջները՝ բարձրացնել ագրոպարենային ոլորտի համար պատրաստվող շրջանավարտների որակը:</li><li>▪ Համալսարանական գիտության վարկանիշի և գիտական գործունեության արդյունավետության բարձրացման հիման վրա զարգացնել գիտական հետազոտությունների և նորարարական գործունեության գերակա ուղղությունները և գիտահետազոտական գործունեության զարգացման համար ստեղծել բարենպաստ պայմաններ:</li><li>▪ Տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների համալիրի օգտագործման միջոցով կատարելագործել կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական գործունեության տեղեկատվական ապահովման համակարգը ու առարկայակողմնորոշման և խորհրդատվական գործունեության տեղեկատվական և ժամանակակից գրադարանային ֆոնդը, համակարգչային տեխնիկայի և համապատասխան ծրագրային միջոցների կիրառումով զարգացնել գրադարանային համակարգը, տեղեկատվական համակարգը և գովազդային ու հրատարակչական գործունեությունը:</li><li>▪ Արտերկրյա առաջատար համալսարանների և միջազգային գիտակրթական կազմակերպությունների հետ կայուն կապերի հաստատման և համագործակցության ընդլայնման, համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը միցված նախագծերի ու ծրագրերի մշակման ու իրականացման և ուսումնառողների ու դասախոսական կազմի ակադեմիական շարժունության ավելացման միջոցով զարգացնել համալսարանի միջազգայնացումը և արտաքին կապերը:</li></ul>
<p><b>Ռազմավարության խնդիրների իրականացման մեխանիզմը</b></p> <p>Համապատասխան մարդկային ու նյութական ռեսուրսներով և ըստ սահմանված ժամկետների՝ ռազմավարությունում նշված խնդիրների լուծման արդյունավետությունն ապահովող կրթական, գիտահետազոտական ու խորհրդատվական միջոցառումների համալիրի իրականացումն է՝ նպատակային ծրագրերի և կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ պլանների տեսքով:</p>

**Միջոցառումներ**

**Կրթության և ուսուցման տեխնոլոգիաների, կրթական ծրագրերի կառավարման բովանդակության կատարելագործում**

- ❖ Կրթության բովանդակության արդիականացում.
  - ✓ Կրթական ծրագրերի արդիականացում,
  - ✓ Կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածության արդիականացում,
  - ✓ Համալսարանի շահակից կողմերի ներգրավում ՄԿԾ-երի նախագծման, իրականացման և վերանայման գործընթացներում:
- ❖ Կրթական գործընթացի կառավարման կատարելագործում
  - ✓ Կրթական գործընթացի կառավարման սկզբունքների կատարելագործում,
  - ✓ Կրթական գործընթացի կառավարման համակարգի զարգացում և կատարելագործում:
- ❖ Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում և կրթական գործընթացի ենթակառուցվածքի կատարելագործում:
  - ✓ Ուսուցման գործընթացի տեղեկատվության ապահովման մեխանիզմների ներդրում,
  - ✓ Լսարանների հագեցում նոր նյութատեխնիկական միջոցներով:

**Համալսարանի գիտանորարարական գործունեության կազմակերպակառավարչական և կադրային ապահովման կատարելագործում**

- ❖ Համալսարանի կառուցվածքի օպտիմալացում
  - ✓ Համալսարանի կազմակերպական և կառավարչական կառուցվածքի օպտիմալացում,
- ❖ Համալսարանի կադրային ներուժի կատարելագործում, մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծում:
  - ✓ Պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական հմտությունների մակարդակի բարձրացում,
  - ✓ Դասախոսական կազմի ակադեմիական փոխանակում,
  - ✓ Կադրային ռեզերվի ձևավորում:
- ❖ Ազրարային կրթության զարգացման ոլորտի կազմակերպությունների, շահակից կողմերի հետ փոխգործունեության կատարելագործում:
  - ✓ Մասնակցություն կրթական, գիտական և արտադրական ասոցիացիաներում, փորձագիտական հանձնաժողովներում:

**Համալսարանի գիտանորարարական ներուժի զարգացում**

- ❖ Գիտության և կրթության ինտեգրում
- ❖ Գիտամանկավարժական կադրերի գիտական արդյունավետության բարձրացում:
  - ✓ Գիտական արտադրողականության մեխանիզմների խթանում,
  - ✓ Գիտության գերական ուղղությունների զարգացում:

**Համալսարանի 2018-22 թթ. –ի զարգացման սպառնալիք արդյունքները**

- ❖ Ուսուցման նոր որակ՝ նորարարական կրթական տեխնոլոգիաների հիման վրա:
- ❖ Հարատև ազրարային կրթության զարգացած համակարգ:
- ❖ Կատարելագործված գիտական միջավայր, որն ապահովում է ազրարային ոլորտի կիրառական հետազոտություններ:
- ❖ Բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ:
- ❖ Բարելավված սոցիալական պայմաններ ուսումնառողների և համալսարանի աշխատակիցների համար:



## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԸՍՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

<p><b>Նպատակ 1.</b> Կրթական գործունեություն</p>	<p>Եվրոպական կրթական տարածքի չափորոշիչներին և ագրարային ոլորտի ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական գործընթացների և կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացում</p>
<p><b>Նպատակ 2.</b> Հետազոտություն և զարգացում</p>	<p>Հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացում, գիտական գործունեության միջազգայնացում, գիտական արդյունքների ներդրում, գիտության կրթության և արտադրության կապի ամրապնդում:</p>
<p><b>Նպատակ 3.</b> Խորհրդատվական գործունեություն</p>	<p>Հանրապետության ագրոպարենային ոլորտի տնտեսվարող սուբյեկտներում և ֆերմերային տնտեսություններում ագրոարտադրական գործունեության արդյունավետության բարձրացման, պարենային անվտանգության ռիսկերի նվազեցման և բնապահպանական հիմնահարցերի լուծման աջակցություն և միջոցառումների մշակում:</p>
<p><b>Նպատակ 4.</b> Կառավարման համակարգ և հակակոռուպցիոն միջավայր</p>	<p>Համալսարանի կառավարման համակարգի կատարելագործում և կառավարման արդյունավետությանը ու թափանցիկության ապահովում:</p>
<p><b>Նպատակ 5.</b> Կադրային ներուժի զարգացում</p>	<p>Համալսարանի զարգացման ծրագրին համապատասխան, հեռանկարային խնդիրների լուծման ապահովմանը միտված կադրային ներուժի ցարգացում:</p>
<p><b>Նպատակ 6.</b> Ենթակառուցվածք և ռեսուրսներ</p>	<p>Կրթական գործունեությունը ժամանակակից պահանջները բավարարող համալսարանի ենթակառուցվածքների բարելավում և զարգացում:</p>
<p><b>Նպատակ 7.</b> Արտաքին կապեր և միջազգայնացում</p>	<p>Համալսարանի միջազգային ճանաչելիության և համագործակցության շրջանակների ու ձևաչափի ընդլայնում, միջազգային համագործակցության ծրագրերին համալսարանի շահակիցների մասնակցության ապահովում:</p>
<p><b>Նպատակ 8.</b> Ֆինանսատնտեսական գործունեություն</p>	<p>Ֆինանսների կառավարման գործընթացի արդիականացման և արտաքին աղբյուրներից ֆինանսական հոսքերի ներգրավման միջոցով համալսարանի ֆինանսական համակարգի կայունություն ապահովում և ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացում</p>

# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

## 3.1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

### Ռազմավարական նպատակ

Եվրոպական կրթական տարածքի չափորոշիչներին և ագրարային ոլորտի ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական գործընթացների և կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացում

### Խնդիր 1.1.

### Միջոցառումներ

### Առաջընթացի գնահատման ցուցիչներ

Որակավորումների ազգային (ՈԱՇ) և ոլորտային (ՈՈՇ) շրջանակներին և ագրոպարենային ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) կառուցվածքի և բովանդակության վերափոխում և բարելավում

Վերամշակել բակալավրի աստիճանի կրթական ծրագրերը՝ ՀՀ որակավորումների ազգային (ՈԱՇ) շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան

Վերամշակել մագիստրոսի աստիճանի կրթական ծրագրերը՝ ՀՀ որակավորումների ազգային (ՈԱՇ) շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան

Ներդնել ագրոպարենային ոլորտի բոլոր ուղղություններով որակյալ, գործնական կողմնորոշված մասնագետների պատրաստման, շուկայի կոնկրետ պահանջները բավարարող կիրառական բակալավրի կրթական ծրագրեր

Ապահովել ԿԾ-երի իրականացման կոմպետենտային մոտեցումը և ակադեմիական գիտելիքների և գործնական հմտությունների փոխկապակցվածությունը

Իրականացնել համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծություն՝ արտաքին գնահատմանը մասնակցելու նպատակով

ՈԱՇ-ի 6-րդ մակարդակի պահանջներին համապատասխան մշակված և գործածության մեջ դրված բակալավրի կրթական ծրագրեր

ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի պահանջներին համապատասխան մշակված և գործածության մեջ դրված մագիստրատական կրթական ծրագրեր

Բակալավրի շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի իրականացումից

Մագիստրատուրայի շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի իրականացումից

Հավատարմագրված 30 մասնագիտությունների կրթական ծրագրեր

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Խնդիր 1.2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
<b>Կրթական գործընթացների կազմակերպման համակարգի՝ մասնավորապես ուսուցման և գնահատման համակարգերի արդիականացում</b>	Անցում կատարել ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդներով դասավանդմանը	Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառմամբ դասընթացների մասնաբաժինը ընդհանուրի նկատմամբ 60/40
	Վերանայել և կատարելագործել ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը	Վերանայված և գործածության մեջ ներդրված ուսանողների գնահատման ձևուն համակարգ
	Ներդնել ֆորմատիվ գնահատման նոր ձևեր	Ուսումնառողների ուսուցմանը նպաստող ժամանակակից կրթական համակարգ
	Ներդրնել նոր կրթական տեխնոլոգիաներ՝ ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով՝ կրթության որակի միջազգային չափորոշիչներին համապատասխան	Ուսումնական պլաններում դասախոսական և գործնական ուսումնական պարապմունքների հարաբերակցությունը 40/60
		Ըստ մագիստրոսական ծրագրերի լսարանային պարապմունքների ընդհանուր ծավալում ժամերի մասնաբաժինը, որոնք իրականացվում են գիտական սեմինարների ձևով 60/40

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### Խնդիր 1.3.

### Միջոցառումներ

### Առաջընթացի գնահատման ցուցիչներ

**Համալսարանի ուսումնառողների ուսումնական ինքնուրույն աշխատանքի կատարելագործման նպատակով որակապես նոր՝ բաց էլեկտրոնային գիտակրթական միջավայրի ստեղծում և դեպի տեղեկատվական ռեսուրսներ ազատ մուտքի ու դասախոսների հետ հաղորդակցման ապահովում**

Արդիականացնել էլեկտրոնային ուսուցման մեթոդների և հեռավար կրթական տեխնոլոգիաների տարրերի իրականացումը թույլատրող կրթական տեղեկատվական միջավայրը

Ներդրված և արդիականացված էլեկտրոնային ուսուցման կրթական տեղեկատվական միջավայր:

Արդիականացված Moodle համակարգի առկայություն:

Համալսարանի մասնաճյուղերի համար հեռավար ուսուցման կազմակերպման լսարանային ժամանակակից համակարգ:

Ձևավորել էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաները և միջոցները

Գործածության մեջ դրված արդյունավետ էլեկտրոնային գրադարանային համակարգ:

Գիտական գրադարանը վերակառուցել գիտական-տեղեկատվական գրադարանային համալիրի

Համալսարանում համացանցով հասանելի արտասարմանյան փակ գրադարանների թվի ավելացում 20 %-ով

Զարգացնել համալսարանի էլեկտրոնային գրադարանային համակարգը և համագործակցել արտերկրյա հրատարակչությունների հետ: Հաշվառման և գրքի տրամադրման էլեկտրոնային համակարգի կազմակերպում

Կրթական ծրագրերի՝ էլեկտրոնային ուսումնական նյութերով աճի ապահովում՝ մինչև 70 %:

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### Խնդիր 1.4.

### Միջոցառումներ

### Առաջընթացի գնահատման ցուցիչներ

**Մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացում, ուսանողական համակարգի համալրման համակարգի ընդլայնում**

Կատարելագործել ՀՀ տարածաշրջաններում հանրակրթական դպրոցի աշակերտների հետ մասնագիտական կողմնորոշման աշխատանքները՝ նոր մեխանիզմների ներդրման հաշվին

Ըստ ոլորտային, ինժեներական, անասնաբուժական կրթական ծրագրերի՝ նպատակային մրցույթի մասնակիցների թվի ավելացում 2017թ. մակարդակի նկատմամբ նվազագույնը 5%-ով

Զարգացնել ռազմավարական գործընկերների հետ համագործակցությունը, անցկացնել համատեղ մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ

Կազմակերպել օլիմպիադաներ, ներգրավելով ՀՀ տարբեր տարածաշրջանների աշակերտների

Հանրապետական օլիմպիադաներին ՀԱԱՀ-ի կողմից ուսանողների մասնակցությունը և տեղերի գրավումը

Մշակել մագիստրատուրա ընդունման համար ավագ կուրսերի և բուհերի շրջանավարտների գրավման մեխանիզմներ

Հայաստանի այլ տարածաշրջաններից և որոշակի պետություններից ուսանողների մասնաբաժնի ավելացում 8 %-ով

Ձևավորել Համալսարանը պոտենցիալ դիմողների աջակցության ցանց

Բակալավր և մագիստրատուրա ընդունվող այլ բուհերի շրջանավարտների մասնաբաժնի ավելացում 15 %-ով

Ապահովել հանրակացանում բնակվելու հնարավորությամբ բոլոր կարիքավոր օտարերկրյա կամ այլ քաղաքից ուսանողների համար

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Խնդիր 1.5**

**Միջոցառումներ**

**Առաջընթացի գնահատման  
ցուցիչներ**

**Ագրոպարենային ոլորտի  
կրթական ծրագրերով միջին  
մասնագիտական կրթության  
բազայի հիման վրա ըն-  
դունելության ընդլայնում**

Ներդնել ինտեգրալ  
մասնագիտական պատրաստվա-  
ծության համակարգ:

Միջին մասնագիտական  
կրթության բազայի հիման  
վրա ընդունվող  
դիմորդների թվի  
ավելացում 25 %-ով

Կատարելագործել մասնագիտական  
կողմնորոշման աշխատանքները  
քոլեջների ուսանողների հետ

# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

## 3.2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

### Ռազմավարական նպատակ

Հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացում, գիտական գործունեության միջազգայնացում, գիտական արդյունքների ներդրում, գիտության կրթության և արտադրության կապի ամրապնդում

### Խնդիր 1.

### Միջոցառումներ

### Առաջընթացի գնահատման ցուցիչներ

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների զարգացումն ապահովող ենթակառուցվածքների ձևավորում և գիտական նոր պրոբլեմային լաբորատորիաների ստեղծում

Գիտահետազոտական գործունեության իրականացման ծրագրային հենքի ստեղծում

Գիտական խորհրդի կողմից հաստատված գիտահետազոտական գործունեության իրականացման ծրագրային փաթեթի առկայություն

Գիտահետազոտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում

Գիտահետազոտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայություն

Գիտական նոր պրոբլեմային լաբորատորիաների ստեղծում

Երեք նոր գիտական լաբորատորիաների առկայություն

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Խնդիր 2.**

**Որակյալ հետազոտությունների  
իրականացման համար  
բարենպաստ պայմանների  
ստեղծում**

**Միջոցառումներ**

Որակյալ հետազոտությունների  
իրականացման համար  
մեխանիզմների մշակում

Գիտահետազոտական  
աշխատանքների  
արդյունավետության բարձրացում

Ֆինանսական միջոցների  
արդյունավետ և նպատակային  
օգտագործում

**Առաջընթացի գնահատման  
ցուցիչներ**

Որակյալ  
հետազոտությունների  
իրականացման համար  
մշակված և հաստատված  
մեխանիզմների  
առկայություն

Գիտական պարբերա-  
կաններում պրոֆեսորա-  
դասախոսական կազմի  
կողմից տպագրվող  
գիտական հոդվածների թվի  
տարեկան 5 % աճի  
ապահովում

Ֆինանսական միջոցների  
արդյունավետ բաշխման  
ծրագրի առկայություն



**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Խնդիր 3.**

**Միջոցառումներ**

**Առաջընթացի գնահատման  
ցուցիչներ**

**Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականության իրականացում**

Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների մշակում

Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված փոխկապակցման մեխանիզմների առկայություն

Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ընթացակարգի մշակում

Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված փոխկապակցման ընթացակարգի առկայություն

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Խնդիր 4.**

**Միջոցառումներ**

**Առաջընթացի գնահատման  
ցուցիչներ**

**Երիտասարդ աշխատակազմի  
հետազոտական գործունեությունը  
խրախուսող քաղաքականության  
իրականացում**

Երիտասարդ աշխատակազմի  
հետազոտական գործունեության  
խրախուսման ընթացակարգի  
մշակում

Գիտական խորհրդի կողմից  
հաստատված  
ընթացակարգի  
առկայություն

Երիտասարդ աշխատակազմի  
հետազոտական գործունեությունը  
խրախուսող քաղաքականության  
մշակում

Գիտական խորհրդի կողմից  
հաստատված  
քաղաքականության  
առկայություն

Երիտասարդ աշխատակազմի  
հետազոտական գործունեության  
համար բարենպաստ պայմանների  
ստեղծում

Ֆինանսավորվող գիտական  
թեմաներում երիտասարդ  
հետազոտողների 30 %  
մասնակցության  
ապահովում

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Խնդիր 5.**

**Գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի արդիականացում**

**Միջոցառումներ**

Գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի արդիականացման մեխանիզմների և ընթացակարգերի մշակում

Գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի արդիականացման քաղաքականության իրականացում

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

Գիտական խորհրդի կողմից հաստատված մեխանիզմների և ընթացակարգերի առկայություն

Գիտական լաբորատորիաներում նոր սարքավորումների ապահովում:  
Արդիական նյութատեխնիկական բազայով հագեցած գիտական լաբորատորիաների առկայություն

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱԼՔԵՐԱԿ**

**Խնդիր 6.**

**Գիտահետազոտական գործունեության և ագրարային արտադրության կապի ամրապնդում**

**Միջոցառումներ**

Գյուղատնտեսական արտադրությանում հետազոտական արդյունքների ներդրման մեխանիզմների և ընթացակարգերի մշակում

Գյուղատնտեսական արտադրության կարիքների բացահայտման մեխանիզմների մշակում

Գյուղատնտեսական արտադրության կարիքների լուծման ուղղված գիտահետազոտական գործունեության իրականացման մեխանիզմների մշակում

Գյուղատնտեսական արտադրությունից հետազոտական պատվերների ձևավորման մեխանիզմների մշակում

Գիտահետազոտական արդյունքների ներդրման և ապրանքայնացման մեխանիզմների մշակում և իրականացում

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

Հետազոտական արդյունքների ներդրման մեխանիզմների և ընթացակարգերի առակայության

Գյուղատնտեսական արտադրության կարիքների բացահայտման մեխանիզմների առակայության

Գյուղ. արտադրության կարիքների լուծմանն ուղղված գիտահետազոտական գործունեության իրականացման մեխանիզմների առակայության

Հետազոտական պատվերների ձևավորման մեխանիզմների առակայության

Գիտահետազոտական արդյունքների ներդրման և ապրանքայնացման 40% -ի ապահովում

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Խնդիր 7.**

**Հետազոտական գործունեության միջազգայնացում**

**Միջոցառումներ**

Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերի մշակում

Օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների կարգավորման մեխանիզմների մշակում

Միջազգային հետազոտական ծրագրերում ուսանողների և դասախոսների ներգրավվածության ապահովում

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

Գիտական խորհրդի կողմից հաստատված կանակարգի առկայության

Օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների կարգավորման մեխանիզմների առկայության

Միջազգային հետազոտական ծրագրերում ուսանողների և դասախոսների 30% ներգրավվածության ապահովում

**Ռազմավարական նպատակ.**

Հանրապետության ագրոպարենային ոլորտի տնտեսվարող սուբյեկտներում և ֆերմերային տնտեսություններում ագրոարտադրական գործունեության արդյունավետության բարձրացման, պարենային անվտանգության ռիսկերի նվազեցման և բնապահպանական հիմնահարցերի լուծման աջակցություն և միջոցառումների մշակում:

<b>Խնդիր 1.</b>	<b>Միջոցառումներ</b>	<b>Առաջընթացի գնահատման ցուցիչներ</b>
<p>Հայաստանի ազգային ագրարային համալսարանի խորհրդատվական և տեղեկատվական գործունեության հիմնական ուղղությունների հստակեցում, կառուցվածքային բարեփոխումների իրականացում:</p>	<p>Ճշգրտել և հստակեցնել ՀԱԱՀ-ում խորհրդատվական և տեղեկատվական աշխատանքներ իրականացնող մասնագիտական ամբիոնների ցանկը, կազմը, նյութատեխնիկական բազան, խորհրդատվական աշխատանքի կարողություններ և հմտություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմը</p>	<p>Համալսարանի գիտական խորհրդի կողմից խորհրդատվական և տեղեկատվական համակարգի կառուցվածքի և գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ հաստատված փաստաթուղթ: Մասնագիտական ամբիոնների ներգրավվածության աստիճանի և ներուժի քանակական ցուցանիշների առկայությունը:</p>
	<p>Համալսարանում պոտենցիալ խորհրդատվական գործունեություն մատուցող պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանել խորհրդատվության մատուցման ժամային ծանրաբեռնվածություն, այն ընդգրկելով իր ժամային ծանրաբեռնվածության մեջ</p>	
	<p>Մշակել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնագիտական ամբիոնների կողմից իրականացվող խորհրդատվական և տեղեկատվական գործունեության չափորոշիչները և տեխնիկական պայմանները, խորհրդատվության մատուցման պլան-ժամանակացույցը</p>	

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Խնդիր 1.

Միջոցառումներ

Առաջընթացի գնահատման  
ցուցիչներ

Համաձայն սահմանված  
չափորոշիչների խորհրդատու  
պրոֆեսորադասախոսական  
անձնակազմի հստակեցում,  
Համալսարանի կողմից  
մատուցվող խորհրդատվական  
և տեղատվական ծառայու-  
թյունների դասակարգում  
սակագների սահմանվում,  
դրանց տեխնիկական  
պայմանների և չափորոշիչների  
սահմանում

**Խնդիր 2.**

Համալսարանի խորհրդատվական և տեղեկատվական ծառայություն մատուցող պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի կարողությունների և հմտությունների հզորացում, խորհրդատվության և տեղեկատվության մատուցման արդյունավետության բարձրացում, խորհրդատվական և տեղեկատվական համակարգի կայուն զարգացում

**Միջոցառումներ**

Համալսարանի խորհրդատու պրոֆեսորադասախոսական անձնակազմին խորհրդատու մասնագետների միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական գիտելիքների ուսուցում և տեղեկատվության մատուցում, նրանց որակավորման բարձրացում և վերաորակավորում

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

Համալսարանի վերապատրաստված, վերաորակավորված խորհրդատու պրոֆեսորադասախոսական անձնակազմի ցուցակի առկայություն մասնագիտական հմտությունների և կարողությունների հզորացման ուղղված միջոցառումների արդյունքները, միջազգային փորձի ձեռք բերման քանակական ցուցանիշներում, ինովացիոն գիտելիքներ:

Համալսարանի խորհրդատու պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների և մրջազգային փորձի հասանելիության ապահովում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում

Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում, համատեղ միջոցառումների և ծարագրերի մշակում, փոխայցելությունների, գիտաժողովների, սեմինարների կազմակերպում

Համալսարանի խորհրդատու պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների և մրջազգային փորձի հասանելիության ապահովում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում



## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Խնդիր 2.

Միջոցառումներ

Առաջընթացի  
գնահատման ցուցիչներ

Միջազգային կազմակերպությունների  
հետ համագործակցության  
ընդլայնում, համատեղ  
միջոցառումների և ծարագրերի  
մշակում, փոխայցելությունների,  
գիտաժողովների, սեմինարների  
կազմակերպում

Համալսարանի տեղեկատվական և  
ինովացիոն տեխնոլոգիական բազայի  
վրա ստեղծել խորհրդատվության  
մատուցման վիրտուալ ցանց  
խորհրդատվական և  
տեղեկատվական ծառայությունների  
մատուցման անվճար/սահմանափակ/  
և վճարովի/ անսահմանափակ/  
հնարավորություններով

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### Խնդիր 3.

### Միջոցառումներ

### Առաջընթացի գնահատման ցուցիչներ

Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի, գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում և վերամշակող ձեռնարկություններում ըստ մասնագիտացման ուղղությունների խորհրդատվության մատուցման առաջնային կարիքների բացահայտում

Գյուղացիական, ֆերմերային տնտեսությունների և վերամշակող ձեռնարկությունների ագրոարտադրական գործունեության վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում ըստ մասնագիտացման ուղղությունների

Ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների առաջնային բացահայտված կարիքների խմբավորում, առաջնահերթությունների վերլուծություն, նրանց ձեռք բերված բազային գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման արդյունքները, արտադրությունում ներդրված ինովացիոն տեխնոլոգիաների քանակական և որակական ցուցանիշները:

Մասնագիտական ամբիոնների կողմից մշակել խորհրդատվական և տեղեկատվական աշխատանքների հիմնական ոլորտները, թեմաները, թիրախները

Կազմել և ներկայացնել տարբեր մարզերի, գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում և վերամշակող ձեռնարկություններում խորհրդատվության և տեղեկատվության կարիքների բացահայտման պլան- ժամանակացույց

Կարիքների բացահայտման հարցաթերթիկների մշակում և տրամադրում գյուղացիական, ֆերմերային տնտեսություններին և վերամշակող ձեռնարկություններին

Խնդիր 3.

Միջոցառումներ

Առաջընթացի  
զննահատման ցուցիչներ

Իրականացնել կարիքների  
բացահայտում շահառուներց  
ձևավորված նպատակային,  
ֆոկուսային խմբերում որակական և  
քանակական մեթոդներով

Արդյունքների հավաքագրում,  
ամփոփում և վերլուծություններ,  
դասակարգում ըստ բազային  
գիտելիքների ավելացման,  
գործնական հմտությունների և  
կարողությունների հզորացման,  
արտադրության մեջ ինովացիաների  
ներդրման

**Խնդիր 4.**

**Միջոցառումներ**

**Առաջընթացի  
գնահատման ցուցիչներ**

Տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական, փորձացուցադրական սեմինարների կազմակերպում գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում, վերամշակող ձեռնարկություններում, գյուղատնտեսական արտադրության մասնագետների որակավորման բարձրացում և գյուղատնտեսական կրթություն չունեցող ֆերմերների նախնական ուսուցում

Մասնագիտական ամբիոնների, մասնագետ խորհրդատուների կողմից խորհրդատվական գործունեության թեմաների ճշգրտում, դրանց բովանդակության վերաբերյալ խորհրդատվական թերթիկների, գրքույկների մշակում և սպագրություն:

Տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական, փորձացուցադրական սեմինարներին ֆերմերների, ագրոբիզնեսմենների մասնակցության տեսակարար կշիռը, նրանց մասնակցության արդյունքները, գնահատականը, կարծիքների, առաջարկությունների և գնահատականների արդյունքների ամփոփումը

Համալսարանի ուսումնափորձական տնտեսության բազայի վրա տիպային փորձացուցադրական տեղամասերի ստեղծում, դաշտային օրերի, սեմինարների կազմակերպման համար: Առաջավոր ֆերմերային տնտեսություններում սեմինարների և դաշտային օրերի կազմակերպում

ՀՀ գյուղական համայնքներում պատանիների մասնագիտական կողմնորոշման աջակցություն, դպրոցներում մասնագիտական կողմնորոշման շնորհանդեսների կազմակերպում համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մասնագիտական ցուցադրական դասընթացների կազմակերպում

Մարզպետարանների հետ համատեղ գյուղատնտեսական արտադրության մասնագետների որակավորման բարձրացման և գյուղատնտեսական կրթություն չունեցող ֆերմերների վերապատրաստման կարիքների բացահայտում և ուսուցողական սեմինարների կազմակերպում մարզերում և համալսարանում

Գյուղական համայնքային դպրոցներում ստեղծված պատանեկան խմբակների տեսակարար կշիռը, խմբերում ընդգրկված պատանիների թվաքանակը, դրանց մասնագիտական կողմնորոշման քանակական և որակական ցուցանիշները, դպրոցական, համայնքային, մարզային, Հանրապետական տարբեր մրցույթների, շնորհանդեսների, էքսկուրսիաներին մասնակցության բացարձակ ցուցանիշները:

Համայնքապետարանների հետ համագործակցության ճանապարհով գյուղական դպրոցներում ստեղծել մասնագիտական կողմնորոշմամբ պատանեկան խմբակներ, ընտրել

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

պատանեկան խմբի ղեկավար

Մասնագիտական ամբիոնների կողմից մշակել պատանեկան ակումբների հետ տարվող ուսուցողական դասընթացների պատասխանատու խորհրդատուներ, մշակել գործնական գիտելիքների և կարողությունների զարգացմանը աջակցող թեմաներ, հաշվի առնելով համայնքային ագրոարտադրական զարգացման առաջնահերթությունները

Պատանեկան խմբերի հետ համատեղ մշակել ուսուցողական դասընթացների վարման պլան ժամանակացույցը, նյութերի բովանդակությունը, կազմակերպել դրանց տպագրությունը և այն տրամադրել պատանեկան խմբակներին:

Կազմակերպել դպրոցական, համայնքային, մարզային և Հանրապետական /ՀԱԱՀ-ում/ մակարդակներում պատանեկան մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացման ցուցադրական շնորհանդեսներ, մրցույթներ և էքսկուրսիաներ:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

3.4. ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

**Ռազմավարական նպատակ**

Համալսարանի զարգացման ծրագրին համապատասխան, հեռանկարային խնդիրների լուծման ապահովմանը միտված կադրային ներուժի ցարգացում:

**Խնդիր 1.**

Համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական հմտությունների և որակավորման մակարդակի բարձրացում:

**Միջոցառումներ**

Օպտիմալացնել անձնակազմի կազմակերպա-հաստիքային կառուցվածքը՝ հաշվի առնելով կառավարման գործընթացների և ռեսուրսային ապահովվածության օպտիմալացումը

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

Մինչև 55 տարեկան գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձանց աճ 8 %-ով

Երիտասարդ դասախոսների և գիտաշխատողների մոտ զարգացնել կառավարման հմտությունները և տեղեկատվական տեխնոլոգիաներին տիպաբանական կարողությունները

Մինչև 35 տարեկան գիտությունների թեկնածուի աստիճան և դոցենտի գիտական կոչում ունեցող անձանց աճ 15 %-ով

Զարգացնել դասախոսների վերապատրաստումների կազմակերպման համակարգը և կատարելագործել որակավորման բարձրացմանը ուղղված ծրագրերը: Մահմանել մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները՝ ըստ յուրաքանչյուր ծրագրի կրթական վերջնարդյունքների

# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
<b>Համալսարանի դասախոսական և ուսումնառական կազմի որակավորման բարձրացման պայմանների ստեղծում</b>	Ատենախոսություն պաշտպանող դասախոսների և աշխատակիցների աջակցման համակարգի զարգացում:  Որակավորման բարձրացման և վերապատրաստման համար պայմանների ստեղծում՝ օգտագործելով փորձի փոխանակման տարբեր ձևեր առաջատար հանրապետական և այլ ճանաչված համալսարանների և կազմակերպությունների հետ:	Որակավորումը բարձրացրած դասախոսների թվի աճ 30 %-ով  Առաջատար տարածաշրջանային և միջազգային համալսարաններ որակավորման բարձրացման և վերապատրաստման ուղարկված աշխատակիցների թվի աճ 20 %-ով
	Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման պարբերաբար զարգացում դասավանդողների մոտ մասնագիտական առանցքային կոնպետենցիաների զարգացման նպատակով:	Տեղեկատվական և ինովացիոն մանկավարժական տեխնոլոգիաներով, օտար լեզուներով որակավորման բարձրացման ծրագրերով ուսուցում ստացած պրոֆեսորադասախոսական կազմի թվի աճ 35 %-ով
	Պրոֆեսորադասախոսական կազմին տեղեկատվական և ինովացիոն մանկավարժական տեխնոլոգիաների, օտար լեզուների ուսուցման կազմակերպում:	Ուսումնական գործընթացում ներգրավված առաջատար տեղային և արտասահմանյան ուսումնական գործընկերների և դասախոսների թվի աճ՝ 10 %-ով
	Դասախոսական կազմի ակադեմիական մոբիլության ավելացում: Դասախոսների մասնակցություն մասնագիտական ընկերակցություններում, այդ թվում միջազգային: Ուսումնական գործընթացում առաջատար տեղական և արտերկրյա ուսումնական գործընկերների և դասախոսների ներգրավում: Վարչական կազմի շրջանում կառավարման հմտությունների զարգացմանը ուղղված վերապատրաստումների կազմակերպում	

**Խնդիր 3.**

**Երիտասարդ դասախոսներից և աշխատակիցներից համալսարանի ղեկավար կազմի, նրա կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև մանկավարժական և գիտական կադրային ռեզերվի ձևավորում**

**Միջոցառում**

Ստաժավորման համակարգի զարգացում, երիտասարդ դասախոսների և գիտական աշխատողների որակավորման և կոմպետենցիաների բարձրացում արտասահմանյան առաջատար համալսարաններում և կազմակերպություններում:

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

Մասնագիտական որակավորումը բարձրացրած դասախոսական կազմի 30%-ից ոչ պակաս դասախոսներ և գիտ. աշխատողներ:



## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### Խնդիր 4.

**Աշխատակիցների սոցիալական  
աջակցման մեխանիզմների  
կատարելագործում**

### Միջոցառումներ

Սոցիալական ոլորտի  
օբյեկտների զարգացում, դրանց  
վերակառուցում:  
Աշխատակիցների  
աշխատավարձի բարձրացում  
հաշվի առնելով ՀՀ-ում գնաճի  
տեմպերը:

ՊԴԿ-ի համար սոցիալական  
աջակցման համալիր  
համակարգի ներդրում:

### Առաջընթացի

**գնահատման ցուցանիշներ**  
Դասախոսական կազմի  
ռեյտինգային գնահատման ճկուն  
համակարգի առկայություն

3.5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**Ռազմավարական նպատակ**

Կրթական գործունեությանը ժամանակակից պահանջները բավարարող համալսարանի ենթակառուցվածքների բարելավում և զարգացում

Խնդիր 1.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Ուսումնագիտական գործընթացի իրականացումն ապահովող նյութատեխնիկական ենթակառուցվածքների բարելավում և արդիականացում	Արդիականացնել լաբորատոր պարապմունքների անցկացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան ըստ մասնագիտական ուղղությունների Թարմացնել և ժամանակակից պահանջներին համապատասխան վերակահավորել համակարգչային լսարանները	Ըստ մասնագիտական ուղղությունների վերազինված շուրջ 10 ուսումնական լաբորատորիաներ  Վերակահավորված 12 լաբորատորիաների առկայություն
	Արդիականացնել մասնագիտական գիտական լաբորատորիաները ժամանակակից նյութատեխնիկական միջոցներով Բարելավել ուսումնական մասնաշենքերի սանիտարահիգիենիկ և ջեռուցման համակարգերը Արդիականացնել նիստերի դահլիճների կահավորվածությունը Վերանորոգել մարզադահլիճները և արդիականացնել կահավորվածությունը	Շուրջ 10 նոր համակարգչային լսարանների առկայություն Արդիականացված 4 գիտական լաբորատորիաներ  Նորաստեղծ գիտական լաբորատորիայի առկայություն  Վերանորոգված և աշխատող սանհանգույցներ Կատարելագործված ջեռուցման համակարգի առկայություն Մուլտիմեդիալ միջոցներով վերակահավորված 2 նիստերի դահլիճ  Համալսարանի մասնաշենքերում վերանորոգված և վերակահավորված մարզադահլիճներ

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
<b>Համալսարանի կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ինովացիոն գործունեությունն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և կատարելագործում</b>	Էլեկտրոնային դեկանատի ստեղծում	Արդյունավետ աշխատող էլեկտրոնային դեկանատ
	Զարգացնել և արդիականացնել էլեկտրոնային գրադարանի հնարավորությունները և ռեսուրսային բազան	Արդիականացված էլեկտրոնային գրադարանային ծառայություններ
	Բարելավել և զարգացնել համալսարանի ներքին ցանցը	Համալսարանում գործող ինտրանետի առկայություն
	Արդիականացնել ուսանողների էլեկտրոնային ուսումնառության Moodle համակարգը	Գործուն էլեկտրոնային ուսումնառության Moodle համակարգի առկայություն

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### 3.6. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

#### Ռազմավարական նպատակ.

Համալսարանի միջազգային ճանաչելիության և համագործակցության շրջանակների ու ձևաչափի ընդլայնում, միջազգային համագործակցության ծրագրերին համալսարանի շահակիցների մասնակցության ապահովում

#### Խնդիր 1.

#### Միջոցառումներ

#### Առաջընթացի

#### գնահատման ցուցիչներ

**Համալսարանի ճանաչելիությանը և համագործակցության շրջանակի ընդլայնում**

Արտերկյա և տեղական բուհերի ու կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքում

Գործուն նոր պայմանագրեր

Մերձավոր Արևելքի և ասիական բուհերի հետ համագործակցության շրջանակների ընդլայնում

Գործուն նոր պայմանագրեր, համագործակցության իրական արդյունքներ (համատեղ համաժողովներ, դասախոսների և ուսանողների փոխանակումներ, համատեղ գիտակրթական ծրագրեր)

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

Խնդիր 2.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
<b>Համալսարանի համագործակցության ձևաչափի ընդլայնում</b>	Էրազմուս+ ՀԳ1 և ՀԳ 2 ծրագրերի շրջանակներում համագործակցության շարունակում	Էրազմուս+ ՀԳ1 և ՀԳ2 խրագրեր
	Ունենալ ուսանողների և աշխատակիցների շարժունության և արտերկրում սովորելու/վերապատրաստվելու այլ բնույթի ծրագրեր	Բացի Էրազմուս + -ից, այլ միջազգային ծրագրեր (Հորիզոն -2020)
	Ունենալ օտարերկրյա ուսանողներ, որոնք կրթություն են ստանում համալսարանում	ՀԱԱՀ-ում սովորող օտարերկրյա ուսանողներ
	Ունենալ կրթական ծրագրեր, որոնց շրջանակներում կտրամադրվեն կրկնակի դիպլոմներ	Կրկնակի դիպլոմներ տրամադրող կրթական ծրագրեր

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Խնդիր. 3**

**Միջոցառումներ**

**Առաջընթացի  
գնահատման ցուցիչներ**

**Միջազգային ծրագրերին  
համալսարանի շահակիցների  
մասնակցության խթանում**

Համալսարանի՝ օտար լեզուներին  
տիրապետող աշխատակիցների  
քանակի ավելացում

Օտար լեզուներին  
տիրապետող  
աշխատակիցներ

Համալսարանի՝ օտար լեզուներին  
տիրապետող ուսանողների քանակի  
ավելացում

Օտար լեզուներին  
տիրապետող ուսանողներ

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### 3.7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐ

#### Նպատակ

Կատարելագործել Համալսարանի կառավարման համակարգի կատարելագործում և կառավարման արդյունավետությանը ու թափանցիկության ապահովում:

#### Խնդիր 1.

Համալսարանի կազմակերպական կառուցվածքի բարելավում՝ ապահովելով կառավարման «վերնից ներքև» և «ներքնից վերև» սկզբունքները

#### Միջոցառումներ

Օպտիմալացնել համալսարանի կազմակերպական կառուցվածքը, մշակել կառավարման արդյունավետ մեխանիզմներ

Ապահովել համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների փոխկապակցվածությունը և փոխգործունեությունը  
Ապահովել «վերից ներքև» և «ներքնից վերև» կառավարման սզբունքները՝ կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով

Ապահովել ՀԱԱՀ զարգացման ռազմավարական ծրագրի տեղայնացումը կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակի վրա  
Կառավարման գործընթացներում՝ տարբեր մակարդակների վրա՝ բարձրացնել համալսարանի շահակիցների դերը  
Ապահովել կառավարման բոլոր մակարդակների վրա նորմատիվային հենքի վերանայումը և արդիականացումը

#### Առաջընթացի գնահատման ցուցիչներ

Համալսարանի արդյունավետ աշխատող գործուն կազմակերպական կառուցվածք

Համալսարանում ներդրված կառավարման արդյունավետ մեխանիզմներ և կառավարման համակարգ

Համալսարանի ստորաբաժանումներում տեղայնացման գործուն ռազմավարական ծրագրերի և դրանց իրականացման հաշվետվողականության ապահովում

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

### Խնդիր 2.

#### Միջոցառումներ

#### Առաջընթացի գնահատման ցուցիչներ

**Համալսարանական  
կառավարման էլեկտրոնային  
համակարգի ներդրում**

Գործածության մեջ դրնել  
համալսարանական  
էլեկտրոնային  
փաստաթղթաշրջանառության  
համակարգը:

Ներդնել «էլեկտրոնային  
դեկանատ» համակարգը

Ամբողջովին ներդրնել  
համալսարանի միասնական  
էլեկտրոնային կառավարման  
համակարգը՝ համալսարանի  
որոշումների կայացման  
համակարգի  
արդյունաավետության  
բարձրացման նպատակով

Ներդնել համալսարանական  
ինտրանետ

Համալսարանի բոլոր տեսակի  
փաստաթղթերի  
կառավարման համար  
ներդված և արդյունավետ  
աշխատող Moodle  
փաստաթղթաշրջանառության  
համակարգ

Համալսարանի  
դեկանատներում ներդրված և  
արդյունավետ աշխատող  
էլեկտրոնային կառավարման  
համակարգ

Համալսարանի բոլոր տեսակի  
գործընթացների  
ավտոմատացումը և դրանց  
ինտեգրվածությունը  
ապահովող գործուն  
միասնական  
ավտոմատացված համակարգ



**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

<b>Խնդիր 3.</b>	<b>Միջոցառումներ</b>	<b>Առաջընթացի գնահատման ցուցիչներ</b>
<p>Համալսարանի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովում</p>	<p>Բարելավել և զարգացնել համալսարանի տեղեկատվության ապահովման գործընթացները բոլոր մակարդակների վրա մեխանիզմները և գործիքա-խումբը</p>	<p>Համալսարանի կառավարման տարբեր մակարդակների համար մշակված և արդիականացված տեղեկատվության և գործընթացների թափանցիկությունը ապահովող գործուն և արդյունավետ մեխանիզմների առկայություն և կիրառում</p>
	<p>Ապահովել տեղեկատվության ապահովման թափանցիկության գործընթացը բոլոր շահակից կողմերի համար</p>	<p>Կոռուպցիոն ռիսկերը առավելագույն նվազեցնող արդյունավետ գործող թափանցիկության ապահովման գործիքակազմ</p>
	<p>Գործածության մեջ դնել համալսարանի բարեվարքությանը վերաբերող նորմատիվային փաստաթղթերը, ապահովել դրանց կիրարկման թափանցիկությունը</p>	<p>Մշակված և գործածության մեջ ներդրված հակակոռուպցիոն ծրագիր և դրա իրականացման հաշվետվողականության ապահովում</p>
	<p>Մշակել և գործածության մեջ դնել համալսարանի հակակոռուպցիոն գործունեության ծրագիրը</p>	

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Խնդիր 4.	Միջոցառումներ	Առաջընթացի գնահատման ցուցիչներ
Համալսարանի հիմնական շահակիցներին իրականացվող գործընթացներում ներգրավման միջոցով որակի կառավարման համակարգի զարգացում	Ներդրնել համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները ըստ ռազմավարական ուղղությունների՝ կիրառելով դրանք համալսարանի գործունեության տարեկան հաշվետվություններում:	Համալսարանի տարբեր ուղղությունների համար մշակված և ներդրված գնահատման առանցքային ցուցանիշների հիման վրա համալսարանի գործունեության մշտադիտարկում և տարեկան հաշվետվողականության ապահովում
	Բարձրացնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտների արդյունավետությունը՝ վերանայելով և բարելավելով գնահատման մեխանիզմները և գործիքները:	Վերապարտաստված ներքին աուդիտորներ  Ներդրված արդյունավետ մեխանիզմների միջոցով կատարելագործված ներքին աուդիտորական համակարգի առկայություն
	Ընդլայնել հիմնական շահակից կողմերի ընդգրկվածության մակարդակը որակի կառավարման համակարգի տարբեր մակարդակների վրա	ՀԱԱՀ Որակի կառավարման գործընթացներում հիմնական շահակիցների ներգրավվածության աճ՝ 2017 թ.-ի նկատմամբ
	Ապահովել համալսարանի շահակից կողմերի կարիքների բացահայտման գործընթացը՝ որոնք կնպաստեն արդյունավետ որոշումների կայացմանը և բարելավման ծրագրերի մշակմանը	Համալսարանի շահակից կողմերի կարիքների բացահայտման համակարգի առկայություն և հաշվետվողականության ապահովում

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**3.8. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

**Ռազմավարական նպատակ**

Ֆինանսների կառավարման գործընթացի արդիականացման և արտաքին աղբյուրներից ֆինանսական հոսքերի ներգրավման միջոցով համալսարանի ֆինանսական համակարգի կայունությունն ապահովում և ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացում

**Խնդիր 1**

**Համալսարանի ֆինանսական պլանավորումը և կառավարումը նպատակաուղղել համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացմանը**

**Միջոցառումներ**

Կատարելագործել համալսարանի գործունեության ֆինանսական պլանավորման գործընթացը՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակաուղղված բաշխումը ըստ ռազմավարական ուղղությունների

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

Համալսարանի նպատակային բաշխված բյուջե

Ֆինանսական ռեսուրսների ըստ առաջնահերթության բաշխման հաշվին՝ ապահովել նյութական և այլ տեսակի ռեսուրսների նպատակաուղղված բաշխումը

Կատարելագործված և գործուն ֆինանսների կառավարման համակարգ

Կատարելագործել համալսարանի ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգը՝ ֆինանսական և այլ տեսակի ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով

Գործուն ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ

Ապահովել ռեսուրսախնայողական քաղաքականության իրականացում:

Ներդնել ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ՝ համալսարանի ֆինանսական կայունությունը ապահովելու նպատակով:

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Խնդիր 2**

**Արտաքին աղբյուրներից, դրամաշնորհային ծրագրերից և այլ արտաքին ֆինանսական մուտքերի հաշվին համալսարանի ֆինանսական հոսքերի ապահովում**

**Միջոցառումներ**

Ընդլայնել արտաբյուջետային ֆինանսական մուտքերը՝ ապահովելով համալսարանի ֆինանսական միջոցների կայունությունը և զարգացումը

**Առաջընթացի գնահատման ցուցիչներ**

Արտաբյուջետային մուտքերի աճը 2017 թ.-ի նկատմամբ՝ առնվազն 8 %-ով

Բարձրացնել համալսարանի մասնակցության մակարդակը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին:

Գիտահետազոտական աշխատանքներին և համալսարանի ինովացիոն գործունեությանը ուղղված ֆինանսական միջոցների աճը 2017 թ.-ի նկատմամբ՝ առնվազն 12-ի չափով

Բարձրացնել համալսարանի աշխատակիցների աշխատավարձը՝ ֆինանսական արտաքին աղբյուրների ներգրավման և ընդլայնման հաշվին

Միջազգային դրամաշնորհային ծրագրերի հաշվին ֆինանսական միջոցների աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ առնվազն 8%-ի չափով

Ներդնել նվիրատուների ինստիտուտ՝ դրանով իսկ ապահովելով համալսարանի ֆինանսական կայունությունը

Ֆինանսական արտաքին աղբյուրների ընդլայնման հաշվին համալսարանի աշխատավարձի աճ 2017 թ.-ի նկատմամբ՝ առնվազն 15%-ի չափով